**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 23.06.2021թ.
ժամը $14^{15}$

Մասնակցում էին՝

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱՎ ապահովման 1-ին բաժնի պետ, գնդապետ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),

ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱՎ ապահովման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Ն. Չախալյան,

ՀՀ ԶՈՒ ՍՎ ՀՀՄԾ պլանավորման և ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Հ. Զաքարյան,

ՀՀ ԶՈՒ ՍՎ ՀՀՄԾ շահագործման և վերականգնման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Ծառուկյան:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի ավագ մասնագետ Ս.Եսոյան:

***«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Ս.Եսոյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

*Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ս.Եսոյան)

**1.1** ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/7» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Արթուր Հարությունյան» Ա/Ձ |
| 2 | «ՄԱԺԷՎ» ՍՊԸ |
| 3 | «Մայ Մարկետ» ՍՊԸ |
| 4 | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ |
| 5 | «Ագրիմատկո Արմենիա» ՍՊԸ |
| 6 | «Մուշմիլ» ՍՊԸ |
| 7 | «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Ս.Եսոյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցներ էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 « Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/7» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ս.Եսոյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/7» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկներ են ներկայացրել 7 մասնակիցներ.

ՀՀ դրամ

| Հ/հ | Ապրանքի անվանումը | չ/մ | Քանակը | Նախահաշվ. գումարը | Մրցույթին մասնակցող կազմակերպությունների | | | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումները | գնային առաջարկները | | | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ | ընդհանուր գինը | |
| 1 | Խոզանակներ (ծեռքի խոզանակ (սմետկա)) | հատ | 30 | 69,600 | «Մուշմիլ» ՍՊԸ | 67,500 | | 67,500 | բանակցություն |
| 2 | Խոզանակներ (ծեռքի մետաղական խոզանակ) | հատ | 220 | 349,800 | «Մուշմիլ» ՍՊԸ | 330,000 | | 330,000 | բանակցություն |
| 3 | Մեխ մետաղական (մեխ) | կգ | 200 | 100,000 | «Մուշմիլ» ՍՊԸ | 180,000 | | 180,000 | բանակցություն |
| 4 | Փայտի պտուտակներ (պտուտակ) | կգ | 200 | 114,000 | «Մուշմիլ» ՍՊԸ | 460,000 | | 460,000 | բանակցություն |
| 5 | Դիմակ (ռեսպիրատոր) | հատ | 50 | 149,500 | «Մուշմիլ» ՍՊԸ | 150,000 | | 150,000 | բանակցություն |
| 6 | Էլեկտրոդներ (էլեկտրոդ Ф2) | կգ | 12 | 15,600 | «Մուշմիլ» ՍՊԸ | 19,200 | | 19,200 | բանակցություն |
| 7 | Էլեկտրոդներ (էլեկտրոդ Ф3) | կգ | 100 | 62,000 | «Մուշմիլ» ՍՊԸ | 150,000 | | 150,000 | բանակցություն |
| 8 | Փափուկ զոդանյութեր (զոդանյութ) | կգ | 5 | 52,225 | | | | | առաջարկի բացակայություն |
| 9 | Խոզանակներ (խոզանակ) | հատ | 150 | 285,000 | «Մուշմիլ» ՍՊԸ | 277,500 | | 277,500 | բանակցություն |
| 10 | Խոզանակներ (խոզանակ բաժակային) | հատ | 50 | 105,500 | «Մուշմիլ» ՍՊԸ | 110,000 | | 110,000 | բանակցություն |
| 11 | Ռետինե խողովակ(ռետինե ճկախողովակ 16 մթն. ճնշման համար՝ 8մմ անցքի տրամագծով) | մետր | 400 | 344,000 | «Մուշմիլ» ՍՊԸ | 400,000 | | 400,000 | բանակցություն |
| 12 | Ռետինե խողովակ(ռետինե ճկախողովակ 16 մթն. ճնշման համար՝ 10մմ անցքի տրամագծով) | մետր | 400 | 420,000 | «Մուշմիլ» ՍՊԸ | 520,000 | | 520,000 | բանակցություն |
| 13 | Մարտկոց՝ AA տեսակի (ԱԿՄ 1,2V AA) | հատ | 9 900 | 6,237,000 | «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ | 9,058,500 | 1,811,700 | 10,870,200 | բանակցություն |
| | | | | | «ՄԱԺԵԿ» ՍՊԸ | 12,375,000 | 2,475,000 | 14,850,000 | |
| | | | | | «Մայ Մարկետ» ՍՊԸ | 15,262,500 | 3,052,500 | 18,315,000 | |
| 14 | Մարտկոց՝ 3V (1/3N) (Մարտկոց 3V 1/3N)) | հատ | 30 | 57,000 | | | | | առաջարկի բացակայություն |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | Մարտկոց՝ 3V (CR2) (ԱԿՄ 3V (CR2)) | հատ | 160 | 296,000 | «Արթուր Հարությունյան» Ա/Ձ | 350,000 | | 350,000 | բանակցություն |
| | | | | | «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ | 560,000 | 112,000 | 672,000 | |
| 16 | Մարտկոց՝ 9V (R61) (ԱԿՄ 9V (R61)) | հատ | 50 | 150,000 | «Արթուր Հարությունյան» Ա/Ձ | 200,000 | | 200,000 | բանակցություն |
| | | | | | «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ | 290,000 | 58,000 | 348,000 | |
| 17 | Մոլախոտերի դեմ պայքարող նյութեր (ՀՀՍ կենտրոնական բազաների տարածքների խոտերի ոչնչացման համար թունավոր նյութեր) | լիտր | 400 | 600,000 | «Ագրիմատկո Արմենիա» ՍՊԸ | 668,000 | | 668,000 | բանակցություն |
| | | | | | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ | 2,090,000 | | 2,090,000 | |
| 18 | Ազոտ (Ազոտ) | $մ^3$ | 300 | 390,000 | | | | | առաջարկի բացակայություն |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/,

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/7» ծածկագրով ընթացակարգի 1-ից-7-րդ և 9-ից-12-րդ չափաբաժիններին հայտ է ներկայացրել մեկ մասնակից, իսկ 3-ից-7-րդ, 10-ից-13-րդ և 15-ից-17րդ չափաբաժինների մասով առաջարկված գները գերազանցում են պլանավորված նախահաշվային գները՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները 23.06.2021թ. որոշեց նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով 28.06.2021թ. ժամը 11:30-ին ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ: Նախատեսված բանակցություններին ներկայացավ միայն «Մուշմիլ» ՍՊԸ-ն, որը առաջարկեց 5-րդ չափաբաժնի մասով 149 000 ՀՀ դրամ, 10-րդ չափաբաժնի մասով՝ 105 500 ՀՀ դրամ, 11-րդ չափաբաժնի մասով՝ 380 000 ՀՀ դրամ, իսկ 12-րդ չափաբաժնի մասով՝ 500 000 ՀՀ դրամ: Միաժամանակ, «Մուշմիլ» ՍՊԸ-ն ներկայացրեց գրություն՝ համաձայն որի խնդրել է չքննարկել իր հայտով ներկայացված հավելված 1.2-ը, քանի որ այն չի հանդիսանում պարտադիր ներկայացվող փաստաթուղթ: Գնահատող հանձնաժողովը քննարկելով վերը նշված գրությունը և հաշվի առնելով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/7» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.26 կետի պահանջները՝ որոշեց չքննարկել «Մուշմիլ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հավելված 1.2-ը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

(Ս.Եսոյան)

4.1 07.07.2021թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում՝ 1-ին, 2-րդ, 5-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Մուշմիլ» ՍՊԸ-ն, միաժամանակ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի զ) պարբերությունը՝ գնահատող հանձնաժողովը 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչեց «Մուշմիլ» ՍՊԸ-ին:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/7» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.3 Քանի որ ներկայացված գները 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 13-րդ, 15-ից-17-րդ չափաբաժինների մասով գերազանցում է գնումն իրականացնելու համար նախատեսված նախահաշվային գինը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին), գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը վերը նշված չափաբաժինների մասով հայտարարել չկայացած: Իսկ 8-րդ, 14-րդ և 18-րդ չափաբաժիններ մասով ընթացակարգը հայտարարվեց չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը (ոչ մի հայտ չի ներկայացվել):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ**

---

(Ս.Եսոյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/7» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող (ԳԱՊ) | Տ. Մաթևոսյան |
| Գնահատող, | Ն. Չախալյան |
| Գնահատող, | Հ. Զաքարյան |
| Գնահատող, | Ա. Ծառուկյան |
| Գնումները համակարգող՝ | Ս. Եսոյան |